

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2011 թ. հունվարի 21-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կլիմայական ռիսկերի կառավարումը Հայաստանում» թեմայով սեմինարին,
- ✓ 2011 թ. փետրվարի 2-3-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Բարձր արտադրողականության հաշվողական տեխնոլոգիա» թեմայով սեմինարին,
- ✓ 2011 թ. փետրվարի 4-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից դեկտեմբերին իրականացված «Ուսումնասիրություն տնտեսության ճյուղերում» հետազոտության ամփոփ հաշվետվության ներկայացմանը,
- ✓ 2011 թ. փետրվարի 17-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը, ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչության պետ Ա. Մարտիկյանը, պետի տեղակալ Վ. Գևորգյանը, պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Նշանյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Երևանում կայացած 2011 թ. մարդահամարի վերաբերյալ օժանդակության հնարավորությունները քննարկելու նպատակով դոնորների հանդիպմանը,
- ✓ 2011 թ. փետրվարի 23-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը և Ա. Շաբոյանը և Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի շրջանակում ԹՎԻՆԻՆԳ ծրագրի մշտական տեխնիկական խորհրդատու Թոմաս Բայը մասնակցել են ք. Երևանում կայացած «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2011 թ. փետրվարի 26-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Շաբոյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած «Տնտեսական համագործակցությունը նոր աշխարհում՝ հայացք Հայաստանից» թեմայով կլոր սեղանի քննարկմանը: